

ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ¹⁾

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

II

Մենք կարողացանք մեր անցեալ յօդածում տեսութեան առնել բամբակի և մետաքսի արդիւնաբերութիւնը, որոնք մեր երկրի արդիւնաբերութեան մէջ անկասկած յարգելի տեղ են բռնում և ժողովրդական հարստութեան համար մօտիկ ապագայում նշանաւոր ֆակտորներ պէտք է կազմեն որպէս և կազմում են ներկայումս էլ:

Եթէ մենք նոյն այդ տեսութիւնը շարունակենք, ամենից առաջ մեզ աչքի է ընկնում երկրիս արդիւնաբերութեան այն ճիւղը, որ իւր խոշորութեամբ բոլոր ուրիշ Անդրկովկասից արտահանող արդիւնքներին գերազանցում է: Այդ արդիւնքը, որին մենք այժմս դիմում ենք, նաւթն է:

Համարձակ կարող ենք ասել, որ նաւթը Անդրկովկասում արդիւնաբերող արդիւնքների շարքում ամենից շատ նպաստել է երկրիս տնտեսական հռչակին: Նաւթի արդիւնաբերութիւնը հետզհետէ մեծանալով՝ շարժումներ յառաջացրեց, որոնք թէ երկրիս կապիտալներին և թէ ժողովրդական աշխատանքին զործադրութեան ճանապարհ բացարին: Եւ սա մի նոր ասպարէզ էր, որի համար գիտութիւնը և մի չափունի փորձառութիւնը անհրաժեշտ պայմաններ են: Ենթոհիւ այս պայմանների պակասութեանը առհասարակ կիսակիրթ երկիրները, ուր հարստութեան մի նոր աղբիւր է երեւում, զրաւում

¹⁾ Տես «Մուրճ» № 4. 1891 թ.:

են դէպի իրանց բացի տեղական ոյժերից՝ նոյնպէս և օտար (արդիւնաբերական) ոյժեր: Վերջինների մասնակցութիւնը աւելի ևս ընդարձակ է, երբ որ նոր երեացող արդիւնքը ստանում է մի ընդհանուր նշանակութիւն համաշխարհային սպառման համար: Նաւթի նկատմամբ մենք հանդիպում ենք մեր երկրում նոյն երեւոյթին, այնպէս որ եթէ սորա արդիւնաբերութիւնը մնար վերապահւած լոկ տեղիս ոյժերին, դժւար էր սպասել նաւթի արդիւնաբերութեան զարգացման այն աստիճանը, որի վրայ նա այժմն զանւում է: Եւ իրաւ մեր վաճառական-կապիտալիստներին պակասում էին գիտութիւն և փորձ, որոնք պէտք է մեծապէս նպաստէին այս գործի տեխնիկական և առևտրական զարգացմանը: Հէնց այս պայմանների պակասութեանը լրացումն տւին օտարները, որոնք մեզ մօտ եկան Եւրոպայից և Ռուսիայից օժտւած լինելով ձեռնարկող ոգով, գործնական ընդունակութիւններով և խոշոր կապիտալներով: Ի պատիւ մեր վաճառական-կապիտալիստների չիշենք, որ սոքա կարողացան օգտւել օտարների հետ ունեցած շփումից և իւրացրին մի յայտնի չափով օտարների գործարանական ընդունակութիւնները և սովորութիւնները:

Նաւթի արդիւնաբերութեան զարգացման ժամանակը սկսւում է իսկապէս 1872 թւականից: Մինչև չիշեալ թւականը Բազելից նաւթ տուղ գրեթէ բոլոր տեղերը կազմում էին տէրութեան սեփականութիւնը: Իսկ տէրութիւնը տալիս էր իւր այդ նաւթատեղերը կապալով մասնաւոր մարդկանց, որոնք նաւթ էին արդիւնաբերում այնքան, որքան նոքա կարող էին՝ համեմատ այն ժամանակւայ տեխնիկային և նիւթական միջոցներին: Սակայն կապալառութիւնը նոյն իսկ տէրութեանը անյարմար էր թւում և այս գործի արագընթաց ծաւալման և զարգացման դէմ խոչնդոտներ էր դնում: Համոզւելով այս բանի մէջ, տէրութիւնը սկսեց ծախել իւր նաւթատեղերը մասնաւոր մարդկանց: 1872 թւականին տէրութիւնը ունէր 390 դե-սեատին նաւթատեղեր: Սոցա ծախելուց յետոյ տէրութիւնը ստացաւ 2.279.099 ռուբլի, որ դեռ այն ժամանակ զարմանալի չէր թւում:

Երկրիս տնտեսական առաջադիմութեան շահերը պահանջում էին, որ այսպիսի մի քաջ անէր: Իսկ թէ որքան տէրունական այս

քայլը բարերար ազդեցութիւն ունեցաւ նաւթի արդիւնաբերութեան զարգացման վրայ, այդ կապացուցին թւերը:

Դեռ 1872 թւականին արդիւնաբերում էր մօտ 1,500,000 պուդ հում նաւթ Բագուի յայտնի նաւթատեղերում: Նոյն թւականներին նաւթի գործածութեան սովորութիւնը ժողովրդի մէջ դեռ նոր էր զարգանում և հետեւաբար երկրիս պահանջը այդ արդիւնքի համար մեծանում էր: Որովհետեւ շուկաներում նաւթի պահանջը աւելանում էր, Բագուից արդիւնաբերողները սկսեցին դորա համեմատ ընդարձակել իրանց արդիւնաբերութիւնը, այնպէս որ վերջինս հասել էր 1873 թ. մինչ 3,931,375 պուդի: Ուրեմն միայն մի տարում վերոյիշած նաւթի քանակութիւնը աւելի քան կրկնապատկւել էր:

Սակայն նաւթի արդիւնաբերութեան աւելանալը չընդհատւեց, այլ նա տարեցտարի յառաջ գնաց ահագին քայլերով և ստացաւ մի տենդային բնաւորութիւն, որ երկրիս համար մի նորութիւն էր: Հէնց այս տենդային գործունէութեան ժամանակամիջոցում երևան է գալիս Բագույց արդիւնագործողների համար մի դէպք, որ սկզբում դեռ անհասկանալի էր թւում, բայց որ յետոյ հասկանալի դարձաւ այն բոլոր մարդկանց համար, որոնք ընդունակ են հասարակ տնտեսական երևոյթներ դիտելու և ըմբռնելու: Խօսքս այս հասարակ երևոյթի մասին է, որ միշտ ծագում է, երբոր մի որոշ արդիւնաբերութիւնը ժողովրդի պահանջներից անհամեմատ մեծ է: Նոյն բանը նկատելի էր և մեր նաւթի վերաբերութեամբ: Նաւթը շուկաներում մեծ քանակութիւնով դիզւած լինելով՝ չէր գրտնում իւր համար սպառման ճանապարհները: Բնական է, որ այս պատճառով արդիւնքը պէտք է կորցնէր իւր նախկին գինը: Նաւթի մի պուդը, որ ծախւում էր 45 կոպէկով, ընկաւ յանկարծ մինչ 2 կոպէկ: Բայց նաւթի այդ տագնապը չէր կարող երկար տեւել, որովհետեւ թէ երկրիս սպառելու ընդունակութիւնը և թէ արտասահմանի պահանջը նաւթի վերաբերմամբ շուտով սկսեցին դարձնալ աւելանալ: Լաւ հասկանալով նմանօրինակ առւտրական հանգամանքների հետեւանքները, Բագույց արդիւնաբերողները շարունակում էին նաւթի նորանոր աղբիւրները որոնել, որոնք իրօք տալիս էին արդիւնք ահագին քանակութիւնով: Որքան նոր աղբիւրները հարուստ և առատ էին, նոյնքան և նաւթատեղերի գները առհասարակ աւել-

լանում էին: Մի ղեկավարին նաւթատեղը, որ արժէր 1824—1875 թ. մօտաւորապէս 1000 ռուբլի, զնահաւում էր արդէն 1880 թ. մինչ 24.000 ռուբլի:

Եթէ մենք կանգ առնենք 1888 թւականի վրայ, մենք կը տեսնենք, որ այս տարին արդիւնաբերում է հում նաւթ աւելի քան 190,000,000 պուդ: Հում նաւթից ստացած զանազան տեսակների արդիւնքները հասնում էին նոյն 1888 թ. 50,240,143, պուդի, որից արտահանում է 28.841.339 պուդ արտասահման, իսկ մնացած 21,398,804 պուդ զործ է ածւում Անդրկովկասի և Ռուսիայի մէջ: Իսկապէս հաշւում են, որ վերջին տարիներում մաքրած նաւթի $\frac{2}{3}$ արտահանում է զանազան երկիրներ, այն ինչ $\frac{1}{3}$ սպառում են Ռուսիան և Կովկասի հետ: Այս բոլոր նաւթը արդիւնաբերում է մի հրապարակի վրայ, որի տարածութիւնը պարունակում է $2\frac{1}{2}$ միլիոն քարակուսի սաժէն: Երբոր մենք կարդում ենք այն $\frac{1}{3}$ թիւը մաքրած նաւթի, որ սպառում է մի տարւայ մէջ Ռուսիան, մեր առջև մի խնդիր է յարուցւում՝ թէ արդեօք Ռուսիան չէր կարող աւելի ևս սպառել: Զէ որ Ռուսիայի 100 միլիոնաւոր աղգարնակութիւնը մեծ պահանջ պիտի ցոյց տար այս անդին արդիւնքի համար: Այդ չի կարող հերքել, որ այդ պահանջը իրան զգացնել է տալիս խիստ կերպով. միայն թէ այդ պահանջին բաւարարութիւն տալու միջոցներ չը կան: Միջոցների պակասութիւնը արտայայտւում է երկաթէ ճանապարհների պակասութեան մէջ: Եթէ սոքա ամենուրեք Ռուսիայում շատանային, այն ժամանակ նաւթի և այլ արդիւնքների սպառումն էլ կը շատանար, որովհետեւ այդ միջոցներով այդ արդիւնքը հեշտութեամբ կը թափանցէր ժողովրդական ամեն տեսակ խաւերի զործածութեան մէջ:

Վերը յիշած նաւթի արդիւնաբերութիւնը 1872 մինչ 1888, ինչպէս տեսնում էք, բազմապատկւում է: Սա, ի հարկէ, մի ապացոյց է, որ երկիրը տնտեսապէս հարստացել է:

Հետաքրքիր է իմանալ՝ կան արդեօք մեր երկրում արդիւնաբերութեան այլ ճիւղեր, որոնք մեզ օրաւուր զարգանալու նոյնպիսի ապացոյցներ տալին ապացուցէին: Ի հարկէ կը գտնեն այդպիսի

ծիւղեր, որոնց զարգացումը սակայն դեռ ևս չի արած այնպիսի քայլեր, որպէս զի մենք կարողանանք վստահութեամբ, բացարձակ այնդեւ թէ երկիրը տնտեսապէս հարստացել է: Թէև միւս կողմից անհերքելի է, որ երկրիս արդիւնաբերութեան մի քանի, մանաւանդ զիւղատնտեսական ընտրութիւն կրող, ծիւղերը՝ զտնւելով արդիւնաբերութեան նպաստող պայմաններում, լաւ արդիւնքներ ևն տալիս և խոստանում են ապագայում աւելի ևս զարգանալ: Այս ծիւղերի արդիւնաբերութեան բարձր աստիճաններին հասնելու համար հին և նահապետական աշխատանքի ձևերը բոլորովին աննպաստ ևն: Հարկաւոր են մշակած աշխատանք, մեքենայական արւեստի գործադրութիւն և վերջապէս կապիտալների կենտրոնացումն չիշեալ ծիւղերի ծննդավայրերում: Միայն այս միջոցների գործադրութեամբ կարելի է հասնել ցանկացած նպատակին և յուսալ, որ երկրիս արդիւնաբերութեան ծիւղերի մօտիկ ապագան ապահոված կը լինի: Բայց և այնպէս այդ ծիւղերի ներկայ դրութիւնն էլ զբաւում է մեր ուշադրութիւնը և պահանջում է, որ մենք զոցա վրայ կանդ առնենք:

Մեզ թւում է, որ մեզ հետաքրքրող այդ ծիւղերի մէջ աւելի է ընկնում նաև ծխախոտը, որի պահանջը անկասկած աւելանում է:

Մինչև 1873 թ. ծխախոտի արդիւնաբերութիւնը գտնւում էր շատ անբաւարար դրութեան մէջ: 1873 թւականից նա սկսում է զարգանալ: Զարգացման գլխաւոր շարժառիթը պէտք է վերագրել մաքսին, որ դրեց 1873 թ. Թիւրքիայից ներմուծող ծխախոտի վրայ: Մաքսը վերցնւում էր 2 րուբլի մի պուդ ծխախոտից: Ի հարկէ սոսկ մաքսադրութիւնը չէր ունենալ սպասած հետևանքը, եթէ երկրիս հողային և կլիմային բարեյաջող պայմանները նպաստած չը լինէին: Մաքսադրութիւնը միայն մի միջոց էր ծխախոտի արդիւնաբերութիւնը երկրումս խրախուսելու: Ծնորհիւ այս օրէնսդրական միջոցի, սկսեցին մեղանում ցանել թրքական և ամերիկական ծխախոտի սերմերը, որոնք բաւականին լաւ արդիւնք տւին: Իսկ շարունակ փորձերը, որ անւում էին մինչ 1877 թ. ցոյց տւին նմանապէս որ երկրումս ծխախոտի արդիւնաբերութիւնը շատ շահաւէտ է որ և մեր ստացած արդիւնքը կարող է նոյն իսկ իւր

որպիսութեամբ մըցել ներմուծւող թրքական ծխախոտի հետ: Սա մի իրողութիւն էր, որի առջև տէրութիւնը չէր կարող անտարբեր մնալ: Տէրութիւնը շտապեց մաքսը դարձեալ բարձրացնել: Այն 2 ռուբլին, որ դուռն էր մի պուղ ներմուծւող ծխախոտի վրայ, բարձրացրեց տէրութիւնը մինչ 14 ռուբլու: Ահա մօտաւորապէս այն հանդամանքները, որոնց շնորհիւ մեզանում սկսեցին 1877 թւից աւելի ընդարձակօրէն զբաղւել ծխախոտի արդիւնաբերութիւնով:

1877-ից մինչ 1884 թ. մեզ պակասում են ճշտագոյն վիճակագրական թւերը իմանալու թէ որ աստիճան յառաջ էր դնացել այդ ժամանակում ծխախոտի արդիւնաբերութիւնը: Բայց մենք ունենք ճիշդ տեղեկութիւններ, որ վերաբերում են 1884—85 և 86 թւականներին: Արեւելեան Անդրկովկասի տնկարաններում մի դեստեառինը տալիս էր 1884 թւին մօտ 67 պուղ ծխախոտ, իսկ 1886-ին նա տալիս էր արդէն 75—100 պուղ: Համարեա թէ նման փակտերին մենք հանդիպում ենք արեւմտեան Անդրկովկասում: Որպէս զի մենք մի կատարեալ պատկեր ստանանք երկրիս ծխախոտի արդիւնաբերութեան մասին, վերցնենք այդ նպատակի համար ամբողջութիւն պարունակող թւեր:

Ամբողջ Անդրկովկասում ծխախոտի տնկարանների թիւը հասնում էր 1884 թւին 9,449, որոնք պարունակում էին 1,659 դեստեառին ¹⁾: Եթէ տարուց յետոյ այսինքն 1891 թւականին տնկարանների թիւը եղած է 17,418, պարունակելով 1.819 դեստեառին տարածութիւն: Տնկարանների քանակութեան և հողի տարածութեան հետ աւելանում է, ի հարկէ, և արդիւնաբերութիւնը: Այսպէս 1884 թւականին ստացւել էր 101,252 պուղ, իսկ 1891 թւականին ստացւել էր 116.923 պուղ ծխախոտ: Այդ ծխախոտի քանակութեան մեծ մասը արտահանւում է առհասարակ Ռուսիա, որտեղից իբրև պատրաստի ապրանք (պապիրոսի ձևով) մի յայտնի քանակութեամբ կրկին վերադառնում է մեզ մօտ ծախւելու համար:

¹⁾ Դեստառինը 2400 քառակուսի սաժէն տարածութիւնն է, այսինքն մի տեղ որի լաղնութիւնը 40 սաժէն է, երկարութիւնը՝ 60 սաժէն (մի սաժէնը=3 արշինի, իսկ արշինը=10/14 մետր, այսինքն 10 մետրը=14 արշինի):

Մեր ծխախոտը շատ չնչին կերպով է արտահանուում արտասահման, որովհետև նա չի կարողանում բաւարարութիւն տալ արտասահմանցիների ճաշակին և պահանջներին: Արտասահմանեան շուկաները պահանջում են մեզանից ծխախոտի բարձր և թանկ սորտերը, որ մենք չենք կարողանում արդիւնաբերել, ոչ այն պատճառով, որ հողային պայմանները դորան չեն աջակցում, այլ սոսկ նորա համար, որ մեր արդիւնագործողները չեն կատարելագործւում ծխախոտի արդիւնաբերութեան արւեստի մէջ:

Անդրկովկասի նահանգներից՝ Քուլթայիսինը և Թիֆլիսինը արդիւնաբերում են ծխախոտի բարձր սորտերը: Առաջինը տւել էր 1891 թ. 54,525 պուդ ծխախոտ բարձր տեսակի, երկրորդ նահանգը նոյն թւականին ստացել էր 26,044 պուդ բարձր սորտի: Անդրկովկասի մնացած տեղերում ստացւել է ծխախոտ ցածր սորտի: Մի քանի փորձերից յետոյ համոզւել են, որ կարելի է պատրաստել ծխախոտ բարձր սորտի Անդրկովկասի շատ տեղերում: Արդ, եթէ հնարաւորութիւն կայ այս հետեանքին հասնելու, ինչու ուրեմն չեն դիմում ծխախոտի ընտիր սորտերի արդիւնաբերութեանը: Բոլոր խընդիրը կախած է երևում արդիւնաբերողների խելամտութիւնից և ցանկութիւնից՝ երկրիս արդիւնաբերութեան շահերը լուրջ կերպով պաշտպանելու: Եւ մենք այդ շահերը պաշտպանւած կը տեսնենք, երբոր մեր արդիւնաբերողները կ'աշխատեն ուսումնասիրել ծխախոտի արդիւնաբերութեան խելացի եղանակները և ձեւերը՝ թէ հում նիւթ առատորէն ստանալու և թէ ապրանք լաւ պատրաստելու նպատակով: Միայն այս դէպքում կարելի է յուսալ, որ արդիւնքը կ'արտահանւի ուրիշ երկիրներ, որովհետև միայն այդ դէպքում բաւարարութիւն տւած կը լինենք օտարների պահանջներին:

Մի այլ գիւղատնտեսական արդիւնք, որ Անդրկովկասում հարստութեան աղբիւր է հանդիսանում, դա գինին է: Յոյս կայ, որ մեր գինեգործութիւնը բարեփոխելով իւր արդիւնաբերութեան պայմանները՝ կը տեղծի մի մշտական կապ Ռուսիայի և արտասահմանեան շուկաների հետ: Անդրկովկասի գինին անկասկած ընդունակ է նշանաւոր տեղ բռնելու այն արտահանւելիք արդիւնքների շարքում, որոնք

մեզ խոստանում են ամրացնել երկրիս առևտրական չարաբերութիւնները Ռուսիայի և ուրիշ երկիրների հետ: Յայտնի է, որ Կովկասի զինին արտահանում է Ռուսիա արդէն ամեն տարի, իսկ արտասահման դեռ ևս միայն բացառութեամբ, թէև Կովկասի զինին մի յայտնի համբաւ է վայելում օտար երկիրներում:

Խաղողի աշգիները պարունակում են Անդրկովկասում 72,296 դե-սետոն, որից ստացւում է տարեկան 10.960,000 վեդրօ զինի: Ամենից շատ զինի արդիւնաբերում է Փութայիսի նահանգը, ուր տարեկան քանակութիւնը հասնում է 4.900,000 վեդրօ: Յետոյ հերթը գալիս է Քիթլիսի նահանգին, որ տալիս է մի տարւայ մէջ մօտ 3.700,000 վեդրօ զինի: Երևանեան նահանգը արդիւնաբերում է մօտ 1.000,000 վեդրօ զինի: Վերջապէ՛ս Գանձակի և Բաղւայ նահանգներից իւրաքանչիւրը տալիս է տարեկան մօտաւորապէս 500,000 վեդրօ:

Տեղիս և օտար մասնագէտ-զինեղործները քանիցս անգամ հե-տադուել են Կովկասի զինիները և սոցա արդիւնաբերութեան պայ-մանները և եկել են այն հզրակացութեան, որ Կովկասի զինիները օժտւած են լաւ չտակութիւններով և կարող են Եւրոպա արտա-հանել, եթէ նոքա եւրոպական ճաշակի համեմատ պատրաստեն: Սակայն Կովկասի զինեղործութիւնը դեռ անոցժ է այսպիսի պա-հանջին բաւարարութիւն տալու և չի էլ կարող շուտով այդ նպա-տակին հասնել, քանի որ նա միջոցներ չունի դորան հարկաւոր պատրաստութեամբ պաշարւելու. հարկաւոր են մեծամեծ նկուղ-ներ, զինեղործական կատարելագործւած մեքենաներ, լաբորատո-րիաներ զինիներ քննելու համար և այլ պարագաներ: Այս տեսակ ձեռնարկութիւնները ենթադրում են կապիտալ և գիտութիւն: Այս վերջին ժամանակներում դուք կը հանդիպէք զինեղործա-կան գիտելիքներով պաշարւած ինտելլիգենտ մասնագէտներին. բայց սոցա գիտելիքները չեն գտնում գործադրութիւն: Մեր աւան-դապահ աշգետէր-զինեղործները չունին ոչ կապիտալ, ոչ էլ ձեռնար-կող ոգի և համարձակութիւն նորագոյն խելացի սկզբունքներով գի-նեղործութեամբ պարապելու, մասնակից անելով այս բանին ինտել-

¹⁾ Մի վեդրօ պարունակում է 16 չիշ:

լիզենտ պատրաստի ոյժերը: Միևնոյն ժամանակ յայտնի է, որ զաւառներում վարկային պայմանները գտնուում են վատթար դրութեան մէջ և կրում են վաշխառուական բնաւորութիւն: Ակներե է, որ ալսպիսի հանգամանքներում գիւղատնտեսական արդիւնաբերութիւնը չի յառաջադիմիլ ցանկացած ուղղութեամբ: Արդէն հասել է այն ժամանակը, երբ ցրած և առանձնացած ուժերով գործելը մեծ մասամբ անպտուղ է մնում տնտեսական ասպարէզներում: Երկրիս տնտեսական շահերը պահանջում են, որ մենք գործենք հաւաքական-ընկերական ոյժերով: Եթէ մեր զինեզորժ արդիւնաբերողները միացնէին իրանց կապիտալները և այս ձևով սահմանէին առեւտրական և արդիւնաբերական ընկերութիւններ, այն ժամանակ սոքա կը կարողանային մեծ համարձակութեամբ և վստահութեամբ դիմել նորանոր ձեռնարկութիւններին: Գործունէութեան այս ձևերով արդիւնաբերողները ձեռք կը բերեն լայն վարկային ընդունակութիւններ՝ աջակցելով միևնոյն ժամանակ նոր վարկային հաստատութիւնների հիմնադրութեանը: Եւ այսպէս մեր զինեզործները ձեռք բերելով մի ապահով դիրք՝ կը փրկեն այն վաշխառուական վարկից, որ նրանց վրայ իշխում է:

Անդրկովկասի որ կողմն էլ գնաք, դուք կը հանդիպէք հարստութեան առատ աղբիւրներին, որոնց շահագործութիւնը դառնում է հեռզհետէ օտարների սեպականութիւնը: Վերցնենք, ի միջի այլոց, պատուտակ (СОХОДКОВЫЙ БОРОЕВЬ), որի գոյութեան մասին մեր երկրացիները գաղափար անգամ չ'ունէին: Օտար վաճառականները որոնելով մեր երկրում այս արմատի ծննդավայրը՝ գտան սորան և սկսեցին առանց տատանման գործարաններ բանալ: Պատուտակի երեւան գալու պատմութիւնը երկար չէ: 1878 թւին յոյները եկան առաջին անգամ Գանձակի նահանգը և միսեցելով 100 հազար ռուբլուց աւելի՝ հիմնեցին մի գործարան պատուտակի արմատը հաւաքելու և արտասահման ուղարկելու: Սոցա գործը այնքան յաջողակ և շահաւէտ էր, որ սա չէր կարող չը գրաւել ուրիշ եւրոպական կապիտալիստների ուշադրութիւնը: Եկան մեզ մօտ նոյնպէս անգլիացիք և յատկացրին խոշոր գումարներ յիշեալ արմատի արդիւնաբե-

բուծեանը: Մի երկու տարի զործելուց յետոյ օտար զործարանատէրերը ստացան մեծամեծ օգուտներ, որոնց համար գրաւական են ստորեւ բերած թւերը:

Պատուտակ ստանալու տեղերն են զլիաւորապէս Բազալ և Դանձակի նահանգի մի քանի դաւառները: Այս տեղերում վերը յիշած երկու զործարանատէրերը հաւաքել էին 1889 թ. մօտ 1.000.000 պուղ հում արմատ: Մի տարուց յետոյ 1890 թ. սոցա արդիւնաբերութիւնը հասել էր 2.200.500 պուղի, որ ասել է թէ՛ աւելի քան կրկնապատկել էր: Միայն յոյների զործարանը արտահանել էր 1889 թ. 240,000 պուղ, 1890 թ.—250,000 պուղ: Իսկ 1887 թ. մինչ 1890, այսինքն չորս տարւայ ժամանակում նոյն զործարանը արտահանել էր 730,000 պուղ հում արմատ: Աւելցնենք այստեղ, որ արդիւնքը ուղարկւում է Եւրոպա չորացնելուց յետոյ: Եւրոպայում հանում են պատուտակից մի տեսակ հեղուկ, որ զործ է ածւում՝ դեղեր և նամանաւանդ սև դարեջուր պատրաստելու համար: Չը մոռանաք, որ արդիւնքը չորանալուց յետոյ՝ կորցնում է իւր նախկին կշիռը: Հետեւաբար այն միլլիօնաւոր ստացած արդիւնքի մի մասը անյայտանում է զործարանատէրերի համար ապարդիւն կերպով: Այսու ամենայնիւ օգուտը այնքան մեծ է, որ այս կորուստը աննշան է երևում: Արդ եթէ այս արդիւնքի արդիւնաբերութեան օգուտները հասնում են օտարներին, մեր առջև խնդիր է ծագում թէ՛ որ աստիճան օտարների զործունէութիւնը նպաստաւոր է մեր երկրի տնտեսական բարօրութեանը: Թէև մեր աշխատանքի և հարստութեան մի մասը կորչում է երկրիս համար, բայց և այնպէս չի կարելի ուրանալ, որ մենք անմասն չենք օտարների ստացած օգուտներին: Տարեկան արտահանումն միայն չորացրած արմատի հասնում է ընդհանրապէս 300,000 պուղի, որից իւրաքանչիւրը արժենում է զործարանատէրերին 70 կոպէկ մինչև վերջնական արտահանւելը: Ուրեմն 200,000 բուբլուց աւելի մնում է մեր երկրին իբրեւ օգուտ:

Այժմ միւսնոյն զործարանատէրերը սկսել են պատրաստութիւն անել՝ հում նիւթից իսկական հեղուկ ստանալու, աչքի առաջ ունենալով թէ աշխատանքի աժանութիւնը մեր երկրի

Ճննդավարներում և թէ պատրաստի տպրանքի վաճառման չարմարութիւնները արտասահմանեան շուկաներում:

Բացի չիշածներից մենք ունենք մեր երկրում արդիւնաբերութեան այլ ճիւղեր, որոնց արդիւնքները, կարծում ենք, կարող են մօտիկ ուշադրութեան արժանանալ տիեզերական շուկաներում: Սոցա ընդլայնումը մի աղաղակող ցանկութիւն է: Վերցրէք օրինակ բուրդը որի մասին մենք չենք կարող շատ տարածել, որովհետեւ դորա մասին դեռ ևս մեզ նիւթեր պակասում են: Ում չէ յայտնի, որ բուրդը վաղուց ի վեր արտահանւում է Անդրկովկասից, Սակայն բուրդի առևտրի նահապետական ձևերը փչացնում են մասամբ տպրանքի յատկութիւնը և մասամբ էլ խանդարում են առևտրի զարգացմանը: Անդրկովկասում մօտաւորապէս 5,000,000 զլուխ ոչխար կայ: Եթէ ամեն մի ոչխարը միջին թւով 4 ֆունտ բուրդ տալ տարւայ մէջ, մենք կը ստանանք 20,000,000 ֆունտ կամ 500,000 պուդ: Մի պուդ անլայ բուրդը արժէ 5 մինչ 6 ռուբլի, այնպէս որ երկիրը կը տար մի տարւայ մէջ 3,000,000 ռուբլու արդիւնք: Ունենալով բնութիւնից տւած արածելու արօտատեղեր՝ ոչխարապահութիւնը մեզանում տակաւին չի զարգանում: Սա չի զարգանում, որովհետեւ մենք չունինք ոչ պատրաստի մարդիկ և ոչ էլ դորան հարկաւոր միջոցներ այսպիսի շահաւէտ գործին նւիրւելու:

Գալով պղնձին, որ արդէն վաղուց տեղ է բռնում Անդրկովկասի հանքային արդիւնքների շարքում, պէտք է խոստովանենք, որ մեր տեղացի կապիտալիստները դեռ մի նշմարելի դեր չեն կատարած պղնձի արդիւնաբերութեան զարգացման համար: Այն ինչ որ կատարւում է այս վերաբերութեամբ, դորա համար էլ պէտք է շնորհապարտ լինել գլխաւորապէս եւրոպացիների աշխատանքին (գերմանացի եղբայրներ Սիմենս, Գետտբէկում, Գանձակի նահանգում): 1884 թին արդիւնահանւած էր մեզանում 87,545 պուդ պղինձ, իսկ 1887 թ. 112.859 պուդ:

Բնութիւնը, կրկնում ենք, օժտել է մեզ հարստութիւններով, որոնցից մենք օգտւել չը գիտենք. հէնց մասնանիշ անենք երկրի-

բազմատեսակ սրտուղների վրայ: Անդրկովկասի արևելեան և արևմտեան կողմերում գտնուում են անհուն տարածութեամբ այգիներ, որոնք տալիս են շատ լաւ պտուղներ: Մտածում են արդեօք մերերկրացիները, որոնք իբրեւ թէ դործեր են որոնում և չեն գտնում, չոր և պահած մրգեր պատրաստելու դործարաններ բանալ: Սրինակ Ամերիկայում 3000 բնակիչ ունեցող տեղեր կան, որոնք մրգեր են պատրաստում տասնեակ միլիոն Ֆրանկ արժողութեամբ: Մեզանում գիւղատնտեսական ընկերութեան նախաձեռնութեամբ փորձեր արւեցին Թիֆլիսի այգեբանական ուսումնարանում չոր մրգեր պատրաստելու և այս փորձերը յաջողութիւն ունեցան ¹⁾:

Ով որ ձեռնարկում է մի նոր արդիւնաբերութեան, նա պէտք է ձգտի իւր կապիտալը և աշխատանքը լրջութեամբ դործ դնելու այն սկզբունքների հիման վրայ, որ գիտութիւնը և փորձը մշակել են: Մեր անհամբեր վաճառական կապիտալիստները ընդհակառակը նայում են իւրաքանչիւր դործի վրայ վաշխառուական աչքերով: Ոոցա կիբը՝ շուտով հարստանալու՝ մի տեսակ մոլութիւն է դարձել, որ անպայման կերպով խանդարում է լուրջ և օրինաւոր դործերի հաստատուելուն և միւս կողմից վաճառական մարդկանց փոխադարձ հաւատի զարգացման և ծաւալմանը: Մեծ մասամբ մեզանում փոխադարձ հաւատը բոլորովին բացակայում է, որ յետաձգում է նորանոր դործերի հաստատութիւնը: Մենք կարծում ենք, որ հնարք կայ ներկայ հանգամանքների ծանրութիւնից մի օր ազատելու: Մենք կը հասնենք այդ օրին միայն այն ժամանակ, երբ որ մենք սփռած կը տեսնենք Անդրկովկասեան զանազան տեղերում տարրական և միջնակարգ տեխնիկական, գիւղատնտեսական և առևտրական ուսումնարաններ, երբոր սոքա մեր ժողովրդի արդիւնաբերական ոյժերը կը բազմացնեն, տալով մեզ մի նոր պատրաստի սերունդ երկրիս սնտեսական դործունէութեան համար: Ի հարկէ հոգային արդիւնաբերական ոյժերը և կապիտալը առաջ-

¹⁾ Չոր մրգերի մասին տես «Մուրճ» 1889 թ. № 11, լողած Հ. Սոդոմոնեանի:

